2288
1. XI. 4

№ 1 ԹԷՀՐԱՆ ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐ 7

1896
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐ 7 №

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 30 ՀԱՄԱՐ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրան, կէս տարուանը 6 դրան: Առանձին համարները 5 շահի:

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի:

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի: Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 Թ

Գ. ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ Գ. ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ

Կը հրատարակվի Թէհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով: «Շաւիղի» բաժանորդագին է Պարսկաստանի համար մէկ թուման. կէս տարուանը վեց դրան: Արտասահմանի համար 3 ռուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 ռուբլի կամ 5 ֆրանկ:

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկուեն անպատճառ հետեւեալ հասցէով: Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշտ այս հասցէով և առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները, այլապէս չեն ընդունվիլ: Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթադրամով. Հասցէն Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH». այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղած թղթակցութիւնները:

Ապառիկ բաժանորդագրութիւն ոչ մի դէպքում չէ ընդունվում:

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH», Téhéran.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այն ժամանակ կը շնորհաւորենք.—ՆԵՐՔԻՆ ՅԵՍՈՒԹԻՒՆ Հայկական հարցի մասին. Նամակ Հայաստանից— Նամակ Ղարսէ՛ից— Նամակ Ղազվինից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն· Քաղաքական տեսութիւն. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Արտաքին լուրեր. Յայտարարութիւններ.

Այն ժամանակ կը շնորհաւորենք

Արիւնոտ թուել հազարներով—ահա թէ ո՞րն է անցեալ տարուայ հաշուեկշռի բովանդակութիւնը...

Մնացած ամէն ինչ, մնացած բոլոր թուերը ազատանում, ոչնչանում են մեր կոտորուած եղբայրների թուի մեծութեան առջև:

Խորին սգով համակուած, տենդային սպասողական դիրքի մէջ, անյայտութեան առաջ շլարած, երբեմն յուսալից յաճախ յուսահատ, անորոշ, մարդակերպ գայլերի բացուած կլանող բերանների զոհ դարձած մեր թշուառ եղբայրների դիակների առաջ, մենք ոչինչ շնորհաւորել չենք կարող...

Հայի նոր տարին դուցէ պիտի շուտով գայ, նա իր գալուստը աւետող արեան գետակները հոսեցրեց, դիակների կոյտերը կանգնեց և դեռ շարունակում է զոհերի վրայից անցնել, նրանց միջով քայլել, նրանց վրայ կոթնել...

Չը գիտենք երբ կը լինի այդ նոր տարուայ առաջին օրը, որին հայը պիտի իր սրտի ամբողջ խանդովը ողջունէ. չը գիտենք նրա ժամանակը, թէև հեռու չը լինի. յամենայն դէպս հայը նոր տարի դեռ չէ ունեցել և չունի...

Նա չը կայ դեռ. ցանկանք, աշխատենք, մեր բոլոր ոյժերը գործադրենք որ նա մօտալուտ լինի, որ նա արիւնից և դիակներից գոյացած լոյսով ողողուած բերէ հային նոր կեանքը, որ տարեգլուխը որին ամէն հայ սպասում է տենդային յուզմամբ, ջղային լարուած դրութեամբ...

Այն օրը ահա միայն մենք կը շնորհաւորենք ցնծագին, իրական, կենսատու Նոր Տարին...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Մուստաֆա-Զէքի փաշան նշանակուելով զօրքի գլխաւոր հրամանատար, ժողովելով Կրէտէ կղզու զօրախումբը, տասն օր առաջ, քսան թնդանօթներով և պատերազմական մթերքների մեծ պաշարով Ալէքսանդրէտից գնաց դէպի դէպի Մարաշ: Չորս օր առաջ նա դուրս եկաւ Մարաշից 12,000 զինուորներով, որոնցից միայն 1000 հոգի կանոնաւոր զօրք է, մնացածը բաղկացած է ըէդիֆներից. նա կանգ առաւ Զէյթունից 4 ժամ հեռաւորութեան վրայ: Յետոյ նա տեղեկացրեց կառավարութեան, թէ Զէյթունը առնելու համար պէտք է 50,000 կանոնաւոր զօրք և 50 թնդանօթ ունենայ: Նա յայտնեց մի և նոյն ժամանակ որ ըէդիֆներին հաղուստ տրւի, որովհետև նրանք բոլորովին մերկ են, նոյն իսկ շապիկ և վարտիք չունեն: Փաշան յայտնում է նոյնպէս, որ զօրքը միայն մի օրուայ հսկայ հաց ունի և ուտելիք չը կայ:

Տեղական իշխանութիւնները 20,000 լիրայի փոխառութիւն են արել, բայց դրա կէսը բաժանվել է սպաներին, իսկ միւս կէսը հազիւ մի շաբաթ բաւի: Ըէդիֆներին Մուստաֆա Զէքի փաշան գինաւորեց Հալէպի մթերանոցից, բայց զէնքերի մեծ մասը փչացած դուրս եկաւ: Նրա դիմումների հետևանքն այն եղաւ, որ ուղարկեց վեց բատալիոն համիդիէ հեծելազօրքի մի խումբ:

Զէյթունի զինաւորված բնակիչների թիւը 56,000 է: Մի նոր զեկուցագրի համաձայն, Մարաշի իշխանութիւնը մըտադիր է պատգամաւորութիւն ուղարկել Զէյթուն, բաղկացած 20 նշանաւոր հայերից, տեղական կղերի հետ միասին որպէս կի կարգադրեն հաշտութեան պայմանները: Մի ուրիշ տեղեկութիւն հաստատում է, որ Ադանայի կառավարիչը յայտնել է Բ. Դրան, թէ 5—6000 հայեր բռնել են սարերը այդ քաղաքի շրջակայքում և Մարասուանի ճանապարհի վրայ 6000 մարդկանցից աւելի կան: Անտիոքի գայմագամը հեռագրել է, թէ 5000 լաւ զինաւորված հայեր իջել են ափը Քէսաբի և Սվէդիայի մօտ: Այդ կողմի թիւրք գիւղերը միաբանուել են հայերի հետ և յայտել են, թէ իրանք ևս ուզում են ազատ լինել.

Daily News

Թիւրքաց կառավարութիւնը բանակցութիւններ է սկսել Զէյթունի հայ ապստամբների հետ՝ անձնատուր լինելու պայմանները որոշելու համար: Այդ խորհուրդը կառավարութեան տուել է Կ. Պոլսի գերմանական դեսպանը, սակայն բանակցութիւնները անաջող են անցել:

Նոյնը

Այժմ բոլոր դեսպանները տեղեկութիւններ են հաւաքում Հայաստանի անկարգութիւնների ժամանակ եղած զոհերի թիւ մասին: Երբ բոլոր տեղեկութիւնները ունենան և նոյնպէս զոհերի թիւը հասկանան, այնժամանակ նրանք մտադիր են Բ. Դրան ուշադրութիւնը հրաւիրել թուերի զանազանութեան վրայ:

Times

Երզրումի եպիսկոպոսին (Ղևոնդ եպ. Տիշմանեան) որին թիւրքերը համարում են որպէս ապստամբապետ, ձերբակալել են և ուղարկել Կ. Պոլիս: Ասում են որ նրան կաքսորեն Երուսաղէմ:

Köln. Zeit.

Պապը հայոց հարցի առիթով ուղարկելու է մի կոնդակ որի մէջ մատնացոյց է անելու հայերի և թիւրքերի հաշտութեան և բարենորոգութիւնների իրագործման անհրաժեշտութեան վրայ:

Новости

Զէյթունից ստացուել են տեղեկութիւններ որ պաշարուածների դրութիւնը շատ էլ ծանր չէ, ինչպէս կարծում են: Նրանք բաւական պաշար ունին և կարող են դիմանալ, եթէ մինչև անգամ պաշարումը շարունակի ամբողջ ձմեռը: Զէյթունի մօտ վերջերս շատ արիւնահեղ կռիւներ եղան: Մեծ քանակութեամբ եկած ձիւնը արգելում է թիւրքաց զօրքերի գործողութիւնները, որոնց փոքրաթիւ զօրքերը աննշան յաջողութիւններ ունեցան: Թիւրքերը միտք ունին ամեն կողմից պաշարել Զէյթունը:

Ռուս. հեռ. գոր.

Հեռագիրներ են ստացուել որ Կրէտական յեղափոխականները մտադիր չեն անձնատուր լինել:

Այնթափում դեկտ. 26-ին կրկնուել են անկարգութիւնները: Վային հեռագրել է կառավարութեան որ իր ունեցած ոյժերով անկարող է կարգ պահպանել:

Daily News

Դիարբէքիրից լուր է հասնում որ յունվար 3-ին (Ն. տ.) նորից մեծ կոտորած է եղել. հայերը լցուել են եկեղեցիներ. պէտք է եղել զինուորական ոյժ, քիչ զսպելու համար քիւրդերի բարբարութիւնները:

Cor. Bur.

Ուրֆայում յունվար 1-ին մեծ անկարգութիւններ են եղել և 900 զոհ տուել: Յարձակուող քիւրդերն ու բեդուինները սոսկալի բարբարութիւններ են գործ դրել: Բրէյդախում մեծ հրդեհ կայ:

Ռուս. հեռ. գոր.

ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Բալու, 11 դեկտ. 95

Սասունն ու Դալորիկը մոռցուեցան պատմութեան մէջ... Բալու, իր շրջակայքովը, քանի՞ցս աւելի խղճալի եղած է: Չեմ կրնար ամեն բան գրել: Ի՞նչ ահաւոր, սոսկալի բաներ որ կրնաք-երևակայեցէք: Բալուայ համար, ինչպէս նաև Մալաթիոյ, Արաբկիրի, Զարսանջագի և այլն տեղերի համար պատմածները—ճշմարտութիւններ են: Բաներ եղան, զորս կարելի չէ երևակայել. իսկ ես որ տեսած եմ

այդ սոսկումներուն մէջ կը գտնուիմ աս վարկենիս—չեմ կարող նկարագրել։ Ինչք գնաց, կեանքեր զոհուեցան, կանանց պատիւ բռնաբարուեցաւ և հաւատք ուրացուեցաւ ու դեռ կուրացուի ալ... Հազարներով կուրանան. բողոքական պարուելի մը, Խարբերդի քոլէժին պրոֆեսսոր մը, բոլորն ալ ուրացան. Ինչ ընէին. ուրացողք մեռածներէն շատ են, բայց մեռածք հազարաւորներ են բոլոր Հայաստանի մէջ։ Որբերուն, աղքատներուն և անօթիներուն Աստուածը ուր է. ոմանք կարծեմ չեն կրնար հաւատալ թէ Աստուած մը կայ։ Չիս ալ կը փնտռեն, թէև բան մը չրի իրենց։ Զարնուեցայ, մեռայ 5 ժամու չափ, բայց զարմանալի ու հրաշալի կերպով ազատուեցայ. կինս կորսնցուցի, քիւրդերն տարած էին զայն. բայց գտայ վերջէն. դըպած չէին նրա պատուոյն, թէպէտ փորձած էին։ Դեռ մայրս, եղբայրս ու քոյրըս չեմ գտած, վրաներնին չը կրցի բան մը լսել,կըսուի ողջ են. բայց ուր—չեմ գիտեր։ Խարբերդէն սոսկալի լուրեր կառնունք. կըսեն որ քոլէժը քանդեր են, թնդանօթով տներ հրդեհեր. ամեն տեղ եկեղեցիներ հիմնայատակ են ըրեր կամ մզկիթ շիներ... Ա՜խ, չը պիտի ճանչէք զիս, եթէ տեսնաք. չքաւոր մուրացիկի կը նմանիմ. կինս յղի է. աղէկ է որ չը՞ վիժեց...

Հ.

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

21 դեկտ. 95

Չեմ կարծում աշխարհումս մի այլ տեղի ժողովուրդ այնքան անտարբեր լինի դէպի իր հիմնարկութիւնները, որքան Դավրէժի և առհասարակ Ատրպատականի հայ ժողովուրդը։ Ճշմարտութեան դէմ թերևս մեղանչած կը լինենք, եթէ ասենք Դավրէժի ժողովուրդը խնայում է իր նիւթական զոհաբերութիւնը այդ հիմնարկութիւնների համար։ Ո՛չ, նա չի խնայում, այս դէպքում նա այնքան էլ ժլատ չէ, բայց ինչ նշանակութիւն ունի այդ, երբ նա անում է անգիտակցաբար, երբ մի քանի սև բիստիներ շպրտելով՝ արդէն իր պարտքը կատարած է համարում դէպի այդ հիմնարկութիւնները և այլ ևս չի հետաքրքրվում, թէ՝ արդեօք, այդ բիստիները ծառայում են նպատակին, թէ ոչ։

Գալիս է այստեղ առաջնորդի կամ փոխանորդի անունով մի վեղարաւոր. տեղիս ժողովուրդը իրեն սրբազան պարտականութիւն է համարում՝ մեծ շքով դիմաւորել նրան, ովսաննաներով ընդունել և բերել բազմացնելով առաջնորդարանում՝ յանձնել նրան հասարակական բոլոր գործերը և. հեռանալ. իսկ թէ ով է այդ մարդը, արդեօք ընդունակ է հասարակական գործերը վարելը—և այլն, ժողովուրդը դրանով չի հետաքրքրվում...

Ուսումնարան ունին, ուր պէտք է դաստիարակեն իրենց զաւակները, որի վրայ հաղարաւոր թումաններ են ծախսում, իսկ թէ այդ դպրոցը ղեկավարելու ումն է յանձնուած, ինչպէս է ընթանում, ծրագիրը գործադրվում է թէ ոչ... այդ ևս չի հետաքրքրում հասարակութեան. բաւական է, որ իրենց երեխաները ուսդ են անում գլխներից, իսկ թէ նրանք ինչ են անուս ստանում՝ ջառ ու ջուհամ...

Ապացոյցներ այնքան կան, որ մարդ չը գիտէ որը թուէ։ Ըդեօք այն ասել որ հոգաբարձութիւնն այժմ հրաժարուել է և ոչ ոք չի հետաքրքրվում թէ ինչու։ Արդեօք այն, որ բամեան դըպրոցում ուսուցիչներ կան, որոնք այնքան անարժան են այդ կոչման, որ նոյն իսկ աշակերտներն էլ հասկանում են և դատապարտում նրանց արած սխալները բռնում... բայց այս բոլորը ոչինչ։

Ո՞վ է լսել օրինակ, որ հակառակ ծրագրի, առանց բարձրագոյն թոյլտուութեան, հայոց դպրոցում բացի լեզուներից՝ ուրիշ լեզուով առարկաներ մտնեն. և մինթէ այդպիսի մի ինքնուրոյն թոյլտուութեան յանդգնող տեսչին տիրացու ասելուց զատ կարելի է մի ուրիշ անուն տալ... Հրաւիրում ենք Դավրէժի հայ հասարակութեան ուշադրութիւնը, թող նա տիրութիւն անէ իր հիմնարկութեան եթէ չի ուզում որ բոլորովին տակն ու վրայ լինի։

Լ.

ՆԱՄԱԿ ՂԱԶԻՒՆԻՑ

—

20 դեկտ. 95

Ինչպէս յայտնի է, այստեղի դպրոցը, շնորհիւ մի քանի «բարերար» պարոնների փակուած էր, որովհետև Եղած ուսուցիչը մի լաւ ծեծկռելուց յետոյ իրը թէ «տեսուչ» Սիմէօն Բարխուդարեանի հետ, թողեց հեռացաւ։ Թուիցս մի քանի ամիս առաջ այստեղ եկաւ Թէհրանի փոխանորդ հօր կողմից ուղարկուած մի ուսուցիչ։ Նորից մեր «տեսուչ բարերար» պ. Սիմէօնը մէջ ընկաւ և սկսեց հանկանակութիւն ուսուցչին պահելու համար։ Հաւաքուեց 50 թուման և ուսուցչին խոստացուեց 96 թուման տարեկան։ Մի քանի օրից յետոյ նոյն պ. Սիմէօնը, երևի չը հաւանելով ուսուցչին, էլի յարձակվում է նրա վրայ և ծեծում։ Երևի պ. Սիմէօնը ուսուցիչ ծեծելու հիւանդութիւն ունի։ Մի ահագին խայտառակութիւն հետևեց այդ դէպքին։ Այդ վայրենութեան վրայ հրաւիրում ենք փոխանորդ հօր ուշադրութիւնը։ Իսկ Ղազվինի հայերը զարմանում ենք թէ ինչպէս են հանդուրժում անպատիժ թողնելու այդ պ. Սիմէօնի երկու անգամ արածը. չեն վռնդում նրան կըրկան ասպարէզից, խլելով նրանից իր խելքից լիովին հեռու եղող գործերի ղեկավարութիւնը։

Ն. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շաւիղի այս համարից կուղարկուի միմիայն նրանց, որոնք նորոգել են իրենց բաժանորդագրութիւնը ներկայ տարւայ համար։

—

Revue des revues» շատ տարածուած և յայտնի հանդէսի մէջ թարգմանաբար տպուած են Գամառ-Ֆոթիպալի «Ազատ-Երգիչից» հետևեալներ «Ի՞նչ անենք. Վասեցու մօր երգը. Վանեցի կինը. Մըշեցու հեկեկանքը. Մշոյ նոր սերունդը, Հայերուս թուքը» որոնք շատ անյաջող են թարգմանուած։ Այդ բանաստեղծութիւններից յետոյ արձակ կերպով թարգմանուած է Արշակ Չոբանեանի «Թաղում» բանաստեղծութիւնը որ մի գողտրիկ և մելամաղձոտ գրուածք է։ Հանդէսը խոստանում է 96 թուականին տալ հայ գրականութեան մասին մի տեսութիւն, այլ և հայ գրողներից նմոյշներ։

—

Եւրոպական երգիծական թերթերը տպագրում են մէկը միւսից աւելի սուր ծաղրանկարներ հայկական հարցի վերաբերութեամբ։ Մեզ մօտ կարելի է տեսնել Fichietto, Սարեկօգա (ռուս ամսագիր) Figaro Վիէննայի, Moonshine, Kladderadatch և այլ մի քանի թերթերի ծաղրանկարները։

—

Մեզ գրում են Դավրէժից մի շատ այլանդակ լուր Սրամեան դպրոցի մասին։ Իբր թէ այդ դպրոցի տեսուչը, առանց ծրագրին ուշք դարձնելու, արհամարհելով նոյն իսկ ուսուցչական ժողովի վճիռը. թոյլ է տուել որ մարդակազմութիւնն ու մարմնամարզութիւնը դպրոցում դասաւանդուի ռուսերէն լեզուով։ Եթէ այդ լուրը ճիշդ է, մնում է զարմանալ դավրիժեցւոց վրայ որ հանդուրժում են դպրոցի տեսուչ ունենալ մի մանկավարժական հասարակ սկզբունքներին անգիտակ տիրացուի։

—

Նոյն տեղից մեզ հաղորդում են որ Լիլավայի դպրոցի հոգաբարձութիւնն ևս հրաժարական տուաւ։ Այժմ երևի փոխանորդ Սառաջեանը այնտեղ էլ կը մտցնի իր ուզած մարդկանց։

—

Էնզէլիից մեզ գրում են, որ այնտեղ, դեկտ. 21-ի գիշերը, ժամը 11-ին, նաև 23-ին, ժամը 8-ին տեղի են ունեցել երկրաշարժական ցնցումներ 5 բոպէ տևող. երկրորդ ցնցումը այնքան սաստիկ է եղել, որ բոլոր բնակիչները սարսափած էին և դուրս էին նետվում տներից։

—

Սոսկալի երկրաշարժ է տեղի ունեցել տրպատականի Խալխալ կոչուող գաւառում և որպէս Ռէյտէրի գործակալութիւնն է հաղորդում, աւերել է 1000 տուն ու ոչնչացրել 1100 մարդ։

—

Ռուսաց տրանսպորտի այն ընկերութիւնը որ այժմ շինում է Ռաշտ—Ղազվինեան ճանապարհը, ստացել է Ղազվինից Համադան շինելիք խճուղու արտօնութիւնը և նրա մաքսը։ Այդ ընկերութիւնը իր ձեռքն է առել նաև Թէհրանից Ղազվին գտնուող ճանապարհի շահագործութիւնը։

—

Վանի մէջ դեռ կոտրած տեղի չէ ունեցել մի՞ չև դեկտ. 6-ը. ուրեմն կոտրածի լուրը դեռ չէ ստուգվում։

—

Ռուսաց թերթերից երկու ամենաղզուելիները, Новое Время և Моск. Вѣд. սկսել են մի կեղտոտ արշաւանք հայերի դէմ, ամբաստանելով վնասանց ամէն բանում բացի եղածներից։ Լոնդոնից պ. Առաքել Ծատուրեանը մի պատասխան է գրել Новое Время թերթին իր դէմ եղած յարձակումների համար. թերթը այժմ պ. Ծատուրեանի վրայ է սկսել յարձակուել կատաղաբար և ամբաստանել բոլոր Կովկասի հայերին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թէհրան 3 յունվ. 96

Մի մեծ և աղմկալից ժողով՝ վաղուց մեռած—զնացած հնամեայ ընկերութեան մնացորդ անձերի ձեռնարկութեամբ կազմուած՝ սրանից 5—6 օր առաջ դղրդեցնում էր հայկ. դպրոցի դահլիճը։ Այդտեղ էին բուրժուա դարձած «զարգացածները», այդտեղ՝ վարժապետի կոչումով շառլատանութեամբ զբաղուած արբեցողները, այստեղ նաև անձեր որոնք կամենալով մի լաւ բան անել հողմացոյցի պէս դառնում են դէպի այն կողմ, ուր նրանց թեթև քամին է մղում։ Կային լաւ երիտասարդներ էլ, խօսք չ՚ունիմ, գործելու ցանկութիւն ունեցող, փոքր ի շատէ աչխոյժ պատանիներ, բայց «իրարու երեսին ճշմարտութիւնը ասելու վախեցող» անձեր, որոնք յանուն իրենց անձնականից բղխած կուսակցական շահերի՝ ճշմարտութիւնը ոտնատակ տալը չեն խնայում։ Ինչ որ էր, նիստը բացուց մի պատանու 8 երեսեան ճառով։ Մի ճառ որ ամբողջապէս միմանց հակասող մտքերի ամբարումն էր ներկայացնում իրենից։ Լսողները այն եզրակացութեան եկան որ ճառախօսը «փաստաբան»չէրև արամաբանութեան թշնամի։

Ճառից յետոյ սկսեց վիճաբանութիւնը։

Բայց հարկաւոր է ընթերցողին յայտնել թէ ինչու այդ ժողովը. թէ ինչու մի վաղուց մեռած—զնացած ընկերութեան հանգստացած (invalide) անդամները մէջտեղ էին եկել վերակազմելու ընկերութիւնը, որպէս վերանորոգում են մի ակռաները թափած և ծնօտները յոգնած բերան։

Սրանից տարիներ առաջ—կար չը կար մի ընկերութիւն կար, որի անունն էր Ընթերցասիրաց։ Ընկերութիւնը կազմեց մի գրադարան, յետոյ անշարժութեան կնիքը դրաւ վրան և այդպէս անշարժ պահպանեց նրան մինչև մեր օրերը։ Ինչո՞ւ ասէք որ չը կան այդ գրադարանի մէջ. անհամար, ամէն տեսակ լեզուներով սուրբ Գրքեր ու Վարք Սրբոցներ, Մեկնութիւններ աւետարանի, և աստուածաբանական գրքեր, հնադարեան վէպեր, խոհանոցային ռոմաններ։ Բոլորը եթէ հաւաքես ընտրես, միջից դուրս կը գայ 20—30 լաւ գրքեր և 5—600, խալիարով ծախելու, թղթային կոյտ կազմելու արժանի հատորներ։

Ինչ և իցէ. ընկերութիւնը գրադարանը պահեց մինչև սրանից մի քանի տարի առաջ. յետոյ տեսնելով որ տարեկան անդամավճար

փող են տալիս և այդ տուրքը ոչ մի օգուտ չէ արտադրում, ամենքը քաշուեցին, գրադարանը մնաց անտէր, ընկած Հայկ. դպրոցում դպրոցի ուսուցիչների ձեռքը։

Բայց ահա սրանից մի 15 օր առաջ, մի խումբ երիտասարդներ, մտածելով վերականգնել աւերակի փոխուած գրադարանը, որը բնական կերպով դպրոցինն էր դառել կամ ազգային (քանի որ ամէն մի անհիւթութիւնից անգամ լուծուող ընկերութեան կայքը ազգային է լինում, եթէ անդամները չեն ուզում ծախել եղածը), հաւաքվում են, վճռում մի երեկոյթ տալ այդ «Ազգային կամ Հայկ. դպրոցի» գրադարանի օգտին և նրան վերականգնեցնել։ Երեկոյթը գոյացնում է 80 թուման։ Հաղիւ թէ խումբը կամենում է գործի սկսել, որ մէջտեղ են թռնում «կար չը կար» ընկերութեան մնացորդ անդամները և պահանջում փողը, ասելով որ գրադարանը իրենցն է, որ ընկերութիւնը չէ լուծուած և որ որովհետև այժմ փող կայ, իրենք մտադիր են վերակազմել ընկերութիւնը։ Պարզ է որ երեկոյթ կազմողները չը տուին փողը, բանի որ իրենք այդ փողը գոյացրել էին յանուն «Ազգային կամ Հայկազ. դպրոցի» գրադարանին։ Ուստի և նրանք վճռում են փողը պահել մինչև որ յայտնի թէ ո՞ւր է Ազգ. կամ Հայկազ. դպրոցի գրադարանը։

Բայց չէ՞ որ 80 թումանը քիչ փող չէ. ինչ որ էլ լինէր, հարկաւոր էր այդ փողը ունենալ։ «Կար-չըկար» ընկերութեան մնացորդները յուզվում են, շարժվում և ահա այդ ժողովին էր որ ես ներկայ էի, ուր և պատիւ ունեցայ մի սքանչելի ճառ լսել, մի փառաւոր, արամաբանութիւններով լիքը վիճաբանութեան ականատես լինել և մինչև իսկ մասնակցել և որից պատիւ ունիմ հրապարակի վրայ դնել մի նոր ոճ, այն է «բարոյական գողութիւն» ոճը։ Այդ «չատ պարզ» հասկանալի ոճը գործածեց մի արձագանքային դատողութեամբ մարդ (Արձագանք թերթը չը կարծէք, այլ «թութակային դատողութիւն»կոչուածի հոմանիշը) ամբողջ սրահի լայնութեամբ զոչելով, որ եթէ երեկոյթ կազմողները իրենց չը յանձնեն 80 թումանը, նրանք մի «բարոյական գողութիւն» արած կը լինեն մեր ընկերութեան (կար չը կար ընկերութեան) գրադարանից։ Այնպէս չէ՞, ընթերցող, որ այդ՝ բարոյականի սիրահար պարոնը պատրաստ է մի ուրիշ ժողով լինելիս էլ, այդ տեսակ «բարոյական» անմտութիւններ շպրտել բացակայ անձերի հասցէին և քաջաբար մտածել որ մի նոր ոճ է ստեղծել ?։

Մի խօսքով «Կար-չըկար» ընկերութիւնը այդ ժողովով վերակազմուեց և եթէ չեմ սխալվում, շուտով Թէհրանը բաղա կունենայ տեսնել իր ծոցի մէջ մի սքանչելի ընթերցարան, լիքը նոր գրքերով, լաւ թերթերով և այլ ևս մանուկներին չի տալ կարդալու «Ծերունի Էքոքը» իսկ հասակաւորներին «Ղրիւրի» հին համարները։

Իսկ թէ կը սանմ՞ նա 80 թումանը, այդ դեռ չը գիտեմ. չը նայելով որ նոր կազմած ընկերութիւնը կամենում է անպատճառ ձեռք բերել նրան, ինչ որ էլ լինէր, եթէ Թէհրանն իսկ քանդուէր։

Ստուած յաջողութիւն տայ. բայց լաւ կը լինէր որ նախ և առաջ ընկերութիւնը փնտռէր, թէ սրանից մի տարի առաջ կազմած երեկոյթի 90 թումանը իրենց անդամներից ո՞ր մէկի գրպանումն է հալուել—անյիշատակ...

Դիտող.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

...«Թռչինք, թռչինք դէպի այդ սոսկալի սեղանը և նրա շուրջը բոլորած կատաղենք մեր ծննդեան ու զտակական սոները»,..

Ահա թէ որպիսի դերասանական բացագանչութիւններ և դպրոցական այլաբանութիւններն, որոնք բնաւորոշումն Թէհրանում նոր լոյս տեսնող« ստղ-Երևելեան» կոչող շաբաթաթերթը։

Եթէ մի առ մի մէջ բերեմ այդպիսի կտորները, հարկաւոր կը լինէր 15—20 տող «ոհ»-երով և «Ա՜խ Աստուած» ձայնարկութիւններով լցնել։

Յունվար 1-ին էր որ ցուրեց թերթի առաջին համարը։ Մեր ընթերցողներին գաղափար տալու այդ թերթի վրայ, ստիպած եմ (ոչ շատ հաճութեամբ) նկարագրել նրան և հաշիւ տալ բովանդակութեան մասին։

Մարդ երբ մի նոր թերթ վերցնում է իր ձեռքը, առաջ հետաքրքրվում է իմանել ով է խմբագիրը և ինչ ոյժեր են նրան աշխատակցողները։

«Ստղ-Երևելեանի» հրատարակիչն է Ստղ Երևելեան ընկերութիւնը։

Իսկ արտօնատէրն է մի ոմն Մ. Մակարեան։

Մնում է խմբագիրն. Բայց խմբագրի անուն չը կայ թերթի տակ. առաջնորդող և միւս յօդուածները մեզ ցոյց են տալիս թերթը ղեկավարող անձերը, որոնք ստորագրել են և իրենց ամեն սլաւ յօդուածը այս առաջին համարում տպել. դրանք են—Ա. Մարգարեան, Վաղարշակ Բէշկեան և Սոկրատ Մ. Դէլոֆեան

Անշուշտ մեծ նշանակութիւն ունի թերթը ղեկավարողների գոնէ ուսման ցէնը։ Արդ նրանցից առաջինը կիսատ է թողել Պոլսի Պէրպէրեանը դպրոցը որ մի շատ տարրական դպրոց է. երկրորդը՝ Թավրիզի ուսումնարանն է թողել. մի ուսումնարան, որի արդիւնք աշակերտներ միշտ ունենք մեր աչքերի առջև, իսկ երրորդը Թէհրանումն է ուսել։ Այդ պարոնների գրուածքները իսկ արտայայտում են նրանց ուսման ցէնը։ Թերթի առաջին երեսում մի շատ խոնարհ ուղերձ է տպած Ն. Կ. Վեհ. Շահին. երկրորդ երեսից սկսում է մի առաջնորդող, որ կրում է «Մեր ուղղութիւնը» վերնագիրը և որը սակայն ոչինչ չէ պարզում, եթէ ոչ մի ծրագիր։ Ուղղութեան մասին, երբան նա խուսափում է որոշ կերպով գծելուց սակայն երևի սխալմամբ, մէջ է բերում հետևեալ խօսքերը. «խմբագրութիւնը ամեն մի խնդրում միջին մի ընթացք պիտի բռնէ»։

«Միջին ընթացքը» փիլիսոփայութեան մէջ յայտնի է որպէս է ամենաանմ.տ և մի և նոյն ժամանակ թոյլ մտքերի ընթացք։ Նա թէև կոչվում է «էկլէկտիկ» այսինք «ընտրական», բայց յաճախ ստիպած է յիմարութիւններ էլ ընդունել որպէս «ընտիր» մտքեր։ Միջին ընթացք ֆիզիկայի, օրինակ գոյների մէջ գոյացնում է էլի որոշ գոյներ.օրինակ սևից և սպիտակից գոյանում է մի նոր գոյն—այն է մոխրագոյն, կապոյտից և դեղինից՝—կանաչ և այլն։ Ուրեմն, Ստղ-Երևելեանը ինչ պիտի կարողանայ անել, որ իր ընթացքը ոչ սև է կողմը հակի ոչ սպիտակի և ոչ մոխրագոյնի, այլ մի գոյն ունենայ որ երկու գոյների քէֆն էլ չը դդէ։ Օրինակ. Ինչպէս պիտի հաշուածի մի պարոնի, որ կլանել է դիցուք մի ընթերցանի գրքերը։ Չը լինի՞ թէ պիտի ասի որ «ես ոչ պարոնը. եթէ կլանել է գրքերը, ես ոչ թէ «զողանալու» նպատակով է, այլ գրքերի բովանդակութիւնը „կլանելու» և այդպիսով «ուսումնական»դառնալու նպատակով»...

Այդպիսի միջին ընթացքը գուցէ յարմարի գրքեր գողանալու համար, բայց եթէ գողը կլանել է եկեղեցական փողեր և կամ դպրոցի հաղարներով ունեցած պարտքը չէ կամենում տալ... Այդտեղ նա ինչպէս պիտի վարվի...

Առեղծուածական է։ Պիտի բաղա ունենանք անշուշտ, շնորհիւ Թէհրանի նոր թերթի, ծանօթանալ մի նոր ուղղութեան (dimension) հետ։ Ինձ թուում է որ շատ դիտնականների փնտռած «չորրորդ հիպոթադրեալ ուղղութիւնը» պիտի լինի դա (quatrieme dimension hypothétique) որ Ստղ-Երևելեանը պիտի յայտնագործի շուտով։

Թերթի միւս յօդուածների մէջ անուրանալի է «Ո՞վ է ճշմարիտը» կտորի լաւ բաներ ասելու ձգտումը. բայց միմիայն ձգտումը, շատ անշահ կերպով արտայայտուած։ Իսկ ինչ վերաբերում է «Դժուարութիւններ» յօդուածին—դա արդէն կրիտիկայից ցած է և չարժէ ենթարկել նրան քննադատութեան։ Մարդ չէ՞ չէ հասկանում թէ այդ նոր փիլիսոփան ինչ է կամենում ասել, երբ ասում է թէ «եթէ իշխանութիւն անգամ ունենայի, մարդկութեան առջևէն չը պիտի բանայի դժուարութիւններն»... այդ ինչ սոսկալի փիլիսոփայութիւն է, այդ ինչ նախապատմական անփորձ ու անշահ մտքեր են, լիքը սքոլաստիկական՝ «ոհ Աստուած, այն անտեսանելի և գերբնական երկնային զօրութիւնն, ճանաչելով իւր ձեռագործ մարդկային սերնդի թուլութիւնն ու հեշտասիրութիւնն և այնպէս իւր անհուն իմաստութեամբն փակեց այդ ամեն բարեաց և երջանկաբաշխ դանձերի դռներն ու բանալին յանձնեց անագորոյն դժտրութեան“....—մտքերով։ Ո՞ր դարերումն ենք....

Մնում է մի յօդուած էլ, որ գրել է ծերուկ իրը թէ „թարմ հայեացքներով և վառ զգացմունքներով“ (ինքն է իր համար այդպէս ասում) Թէհրանի մի հնամեայ աշրդ, որի անհամ ու անհոտ ոտանաւորներն ու գրուածքները սրանից քսան տարի առաջ անշուշտ կարդացած կը լինին շատերը Էջմիածնի Ալարատի մէջ և որը այժմ սպառնում է մեզ Ստղ-Երևելեանով կարդացնել իր նժդարներ վէպը...

Վերջին երկու յօդուածները թղթակցութիւններ են. առաջինը գովում է տեղիս փոխ. հոր քարոզները, սակայն գտնում է որ նա անտեղութիւններ է անում. Այս „անտեղի“ խնդրի մէջ չեմ մտնում, որովհետև նա լրագրի նիւթ չէ բոլորովին։ Վերջին նամակը մի շնորհաւորութիւն է թերթին։ Ստղ-Երևելեանը „ամեն կողմից ցընծութեան և շնորհաւորութեան նամակներ է ստանում, դա ապացուցանում է, որ „պարոկհային երկար ժամանակից ի վեր արդէն սպասում էր այս թերթին և զղում էր նրա անուրանալի պէտքն“...

Ո՜հ, ո՜հ, համեստութիւն, ուր ես թաղուել։ Ճշմարիտ է ասած որ տգիտութիւնն կապ ունի մտային անհամեստութեան հետ, իսկ կրթութիւնն ու գիտութիւնը միշտ համեստ է քայլում։ Կրիլովի „երկու տակառներ“ առակը թող վկայ լինի դրան։ Վերջին լուրից էր որ արտատպեցինք „թռչենք, թռչենք“—թռիչքը։ Արտաքին լուրերի մէջ թերթը նորդարից արտատպում է այն, որ Թիֆլիսում տեղի է ունեցել Հայոց հրատ. ընկերութեան նւագահանդէսը. զարմանում ենք թէ ինչպէս մոռացել է արտատպելու որ նոյն քաղաքում հայ դերասանական ընկերութիւնը ի նպաստ Տիկին Փառանձեմի և այլն տուել է „Սիրալ հաշիւ“ ներկայացումը և կամ արտատպել՝ որ Թիֆլիսի ժողովարանում դեկ. 20-ին տեղի է ունեցել ընդհ. ժողովի շարունակութիւնը և այլն և այլն։ Բայց բաւական է. յոյս ունեմ որ ընթերցողը գաղափար կազմեց արդէն Ստղ Երևելեանի մասին, որից մի ինչ որ բորբոսնած բարոյախօսութեան, դատարկ բառամօլութեան (phraséologie) և դպրոցի նստարանների հոտ է փչում...

Մնում է այժմ մեր խորհուրդը այդ թերթին։ Երմատական և միակ միջոցն է թերթին նոր այնպիսի ղեկավարողներ ունենալ որոնք պատրաստուած և ընդունակ (compétent) լինին։ Թերթ խմբագրելը դիւրին չէ. ահագին և ծանր պատասխանատուութիւն կայ հասարակութեան առաջ և դանազան տարրական դպրոցներից թողած անձերի գործ չէ։ Ներկայ ղեկավարներով Ստղ-Երևելեանը երբէք չէ կարող լաւ, գոնէ թեթև քննադատութեան անգամ դիմացող յօդուածներ տալ, եթէ ոչ միմիայն թարգմանութիւններ. այն էլ ով գիտէ որպիսի անշահ դործերի. որովհետև թարգմանելու համար էլ որոշ պատրաստութիւն պիտի ունենալ և ամեն մի դպրոցական նստարաններ միայն տեսած անձերի գործը չէ։

Ի բոլոր սրտէ ցանկանում ենք որ Ստղ. Երևելեանը բարւոքի, արմատապէս փոփոխուի, լաւ ղեկավարներ ունենայ. իր մեծախօսաբար արած պարծենկոտ խոստումները կատարելու յաջողի և մի որոշ ուղղութիւն բռնէ. ուղղութիւն որ ոչ թէ իր ընթերցողներին ետ մղէ, այլ միշտ առաջ, միշտ բարձրը...

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Տրանսվաալի խնդիրը.— Հարաւային Աֆրիկէում, Բարեյուսոյ գլխից գաղթած Հոլանդացիների ձեռամբ և ձեռներէցութեամբ բօերների, 308,200 քիլոմետր տարածութեամբ, 695.000 բնակիչներով մի հասարակապետութիւն է այդ երկիրը, որի մէջ տեղի ունեցող դէպքերը վերջին շաբաթներում գրաւել է քաղաքական աշխարհի ուշադրութիւնը։

Երկրի մայրաքաղաքն է Պրետորիա, որից դէպի հարաւ գտնվում է Ժոհաննէսբերգ քաղաքը։ Երկրի մէջ կան ոսկու հարուստ հանքեր։ Երկրում, բացի գաղթողներից կան նաև Աֆրիկական ցեղեր, բասուտոսներ, զուլուսներ և այլն։ Պիտի գիտենալ նաև որ Անգլեացիք օգտուելով բնիկների մի ապստամբութիւնից, 1877 թուին մտան Տրանսվաալ և հաստատեցին անգլիական խնամակալութիւն, սակայն 1880—81 թուին, բոյերների ձեռքով քշուեցին եր-

կրից և հասարակապետութիւնը այժմ կառավարվում է իր սեփական օրէնքներով։ Անշուշտ Անգլեան չէ մոռացել այդ քշելը։

Անցեալ 1895, դեկտ. 29-ին, Ժոհաննէսբերգում շարունակ լուրեր էին պրատումորուիթլանդերները (անգլեացոց կողմնակիցները) գաղտնապէս զինվում են և նախագահը—Կրուգեր պէտք եղած միջոցներ է ձեռք առնում խռովութեան դէմ։ Եթէ հարկ լինէր, վճռել էր գեներալ Ժուբերտին (բօերների շէֆը) հրաւիրել մայրաքաղաք։ Գերմանացիք և ամերիկացիք կառավարութեան կողմն են և ընդդէմ Տրանսվաալի անգլիական ընկերութեան։ Դեկտ. 3-ին իրերի դրութիւնը ծանրանում է Ժոհաննեսբերգում և կանայք ու երեխայք դուրս են գնում երկրից. քաղաքացիք ազդարարութիւն են ստանում պատրաստ լինել պատերազմի, իսկ »վաճառականական ընկերութիւնը» քաղաքում կարգը պահպանելու համար, պահակ զօրք է կազմում։ Գերմանացիք մասնախումբ են ընտրում գործելու և ֆրանսական ու գերմանական թերթերը խիստ հակաանգլիական են այդ խնդրում։ Գերմանական մամուլը ուղղակի խրախուսում է Կրուգեր նախագահին՝ մերժել ուիթլանդերների պահանջները և նրանց կոչում է բաղտախնդիրներ։ Այդ միջոցին, Ժոհաննեսբերգից անգլիացի բնիկների կողմից ուղղուած մի հրաւէրի վրայ, Աֆրիկէի անգլիական ընկերութեան կառավարիչը, 700 ոստիկաններով մտնում է Տրանսվաալ։ Դրանց դէմ է դուրս գալիս բօերների շէֆը։ Այսպէս այդ խնդիրը վտանգի է ենթարկում Գերմանիայի և Անգլեայի յարաբերութիւնները, որովհետև գերմանական մամուլը պահանջում է որ կառավարութիւնը միջամտի՝ բօերների և գերմանացիների շահերը Ժոհաննեսբերգում պաշտպանելու համար։ Այդպէս անգլեացիք ձգտում են Տրանսվաալ մտնել նորից և անգլիական միութեան 300 ոստիկան յունվար 1-ին անցնում են սահմանը։ Զէմբրլէյնը պաշտօնապէս յայտարարում է որ ինքը հրաման է ղրկել Միութեան ոստիկանապետին՝ ետ քաշելու և անգլեացի բնակիչներին՝ հնազանդել Տրանսվաալի իշխանութեանը և հանգիստ մընալ, սակայն Ժէմբրլէնը—ոստիկանապետը անուշադիր է թողնում հրամանը և յունվար 1-ին առաւօտեան ժամը 4-ին ոկսում է կռիւը։ Ժէմբրլէնը իր բռնած մի քանի դիրքերից ետ է մղվում. բօերները յաղթում են։ Գաղղիական թերթերը ուրախութիւն են յայտնում այդ յաղթութեան վրայ և ասում են որ Ֆրանսիան, Գերմանիան և Ռուսիան միացած կը պաշտպանեն Տրանսվաալի խնդիրը անգլեացոց դէմ։

Այստեղից սկսած ահա, ընթերցողը կարող է թերթիս հեռագիրների բաժնում հետևել այն հարցի շարունակութեան, որը սպառնում է (և վախ կայ որ յաջողի) մեռցնել նորից հայկական հարցը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՐԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Լոնդոն. 5 յունվար (Ն. տ.). Զէմբրլէյնը երէկ ընդունեց Տրանսվաալի մի պատուիրակութիւն, որը խնդրեց նրա հրահանգ ուղարկել Ժոհաննէսբերգում եղող անգլեահպատակներին պաշտպանութիւն տրելու։ Զէմբրլէյնը պատասխանեց որ կառավարութիւնը ցաւակցում է ուիթլանդերների տանջանքներին և յոյս ունի որ Տրանսվաալի կառավարութիւնը ուշադրութեան կառնի նրա բարեկամական խորհուրդները։

Լոնդոն. 6. Կրուգէր նախագահը (Տրանսվաալի) հեռագրով շնորհակալութիւն յայտնեց Վիլհելմ կայսեր և ասաց որ Աստուծոյ օգնութեամբ, որքան կարող է, ջանք կանի հանրապետութեան թանգ գնով ձեռք բերուած ինքնավարութիւնը պաշտպանելու և յարատև պահելու։—Ասում են որ նախագահը Կրուգերը համաձայնուել է մի քանի զիջողութիւններ անելու ուիթլանդրներին։

Լոնդոն. 8 յունվար. Ֆրանսական թերթերը այժմ յայտնի կերպով յօգուտ անգլիացոց են խօսում Տրանսվաալի խնդրում։ Հաւատացվում է որ Գերմանիան վերջերս ծրագիրներ է ստեղծել անգլեական առաւելութիւնների առաջը բռնել հարաւ-Աֆրիկայում։ Ժոհաննէսբերգի բէֆորմիստները ցած են դրել զէնքերը և իրենց շահերը վստահացել են Պրիտորեա գտնուող Սըր Հերբիւլէս Ռոբընսոնին։ Սըր Ռոբընսոնը հեռագրել է անգլ. գաղթականութիւնների մինիստրին—Զամբրլէյնին, որ ուիթլէնդերները Ժոհաննէսբերգում անպայման կերպով անձնատուր են եղել և զէնքերը ցած դրել։ Նա հաւատացնում է որ ինքը բաւարար է, որ ամեն ինչ խաղաղ վերջացել է և նոր թշնամութեան վրտանգ չը կայ։

Լոնդոն. 10 յուար. Լուրեր են հասնում որ աղէտալի երկրաշարժ է եղել Պարսկաստանի Ասորպատական նահանգում և ոչնչացել է 1000 տուն ու մեռցրել 1100 անձ։

Լոնդոն. 10 յունվար. Իրերի դրութիւնը Տրանսվաալում լուրջ դիրք է ստանում։ Ասում են որ երէկ նախագահի և Ռոբէնսընի մէջ եղած խորհուրդը շատ ծանր կերպարանք ուներ. նախագահը պահանջում էր որ Թօնգալանդին աւելացուի բօերների երկրի վրայ և 1884-ի դաշնագրութիւնը ոչնչացուի.

Հռովմ. 15 յունվար. Գեներալ Բարատիերին հեռագրել է կառավարութեան որ իր դիրքը Մակալէում դժուարացել է բայց կարող է լաւանալ. որովհետև զօանները շատ կորուստ են ունեցել։

Լոնդոն. 15 յունվար. Մեկոնգի խընդիրը վերջանալու մօտ է։ Անգլեան տալիս է Ֆրանսիային Մեկոնգի՝ վիճաբանութեան տակ եղող արևելեան նահանգը։—Անգլեական նաւատորմը հեռացել է Սալօնիկից։—Միջերկրականի նաւատորմի երկրորդ բաժանմունք՝ գնացել է Ալէքսանդրիա։

Լոնդոն. 16 յունվար. Օտար պետութիւնների Ալէպպօի հիւպատոսները գնացել են Զէյթուն ապստամբների հետ բանակցելու նրանց անձնատուր լինելու համար։—Թագուհին մի ինքնաձեռագիր նամակ է ուղարկել սուլթանին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից հեռագրում են դեկտ. 6-ից, որ Ռաշայի և Գասբայի մօտերքը, Գեաուրբանում, ընդհարումներ են եղել բեդուինների և դրուզների միջև։ Երկու կողմից էլ շատերն են սպանուած և վիրաւորուած։ Կրետէ կղզում տրամադրութիւնը խիստ գրգռուած է յեղափոխական մասնաժողովի գործունէութիւնից։ Ղազի-Մուխթար փաշան կանչուած է Կ. Պոլիս։ Ինչպէս լսվում է, նա բարձր պաշտօն է ստանալու։

—Պաշտօնապէս յայտարարուած է, որ անգլիական պարլամենտը կը բացուի փետրվարի 11-ին։ Վաղուց է, որ պարլամենտն այսքան ուշ չի բացուել, նկատում է Daily News-ը. 1880 թուից պարլամենտի նստաշրջանները սովորաբար սկսվում էին յունվարին։ Ակներև է, որ այժմեան պահպանողական կառավարութիւնը չի շտապում օրէնսդրական աշխատանքներով պարապելու։

—Ֆրանսիական հասարակապետութեան նախագահ Ֆելիքս Ֆորի դէմ ագիտացիան շարունակվում է։ Պարիզի Libre Parole թերթը մի յօդուած է հրատարակել, որով ուղղակի պնդում է, թէ անպատճառ պիտի է կոնդրես գումարուի նոր նախագահ ընտրելու համար և թէ խնդիրը միայն այն է, թէ իսկապէս երբ պէտք է կոնգրեսը գումարուի։ Ցիշեալ լրագիրը ասում է, որ պատգամաւորների ժողովում արդէն քննում է, թէ ով աւելի մեծ շանսեր ունի—Վալդեկ Ռուսոն, թէ Կաւենեակը։ Ագիտացիան գլխաւորապէս կատարվում է արքայական և եղուիտների օրգաններում

—Գերմանական հակահրէականների յայտնի պարագլուխ Ալվարդը փորձ արաւ Միացեալ Նահանգներումն էլ կռիւ մղել հրէաների դէմ։ Ամերիկական մամուլը զարմանալի միաբանութեամբ բողոքեց Ալվարդի մտադրութեան դէմ, ծաղրի առարկայ շինեց և ասաց, որ Ամերիկայում դժուար թէ նա նպաստաւոր հող գտնի իր ագիտացիայի համար։ Սակայն հրէատեաց գերմանացին չը յուսահատուեց Նիւ-Եօրկում։ Շատ մարդ հաւաքուեցաւ։ Հասարակութիւնը Ալվարդին ընդունեց վերին աստիճանի թշնամաբար և երբ նա սկսեց իր ճառը, հոտած ձուաներ նետեցին նրա գլխին։ Ոստիկանութիւնը շտապեց ամենքին հեռացնել դահլիճից։

Ուրօնատէր հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաշուեկշիռ Դպրոցական Բարեսիրական Ընկերութեան 1895 տարուոյ
Ի 15 դեկտեմբերի 1895

—

ՄՈՒՏՔ

Կանխիկ դրամ . . .	33 ղ.	— ղ.
Դպրոցական պիտոյք .	140 »	— »
Նոր և հին (դասագրքեր պակաս արժէքներով) . . .	450 »	— »
Կարասիք	120 »	— »
Ստանալիք տոկոսով .	1902 »	15 »
Գումար	2645 »	15 »
Պահանջք 2895 թուի անդամավճարից	264 »	— »
Պահանջք վիճակախաղի և երեկոյթի տոմսակներից . .	71 »	50 »
Գումարն	335 »	50 »
Զուտ դրամագլուխ	2980 »	65 »

Ընդհանուր ծախք Դպրոցական Բարեսիրական ընկերութեան
1895 յունուար 1 ից մինչ դեկտ. 15

Զրիավարժ ուսանողաց համար գնած նոր դասագրքեր .	300 »	— »
Զրիավարժ ուսանողաց համար դպրոցական ծախք . . .	58 »	10 »
Գումար	358 »	10 »
Ժողովարանի վարձք .	120 »	— »
Տպագրութեան ծախք	70 »	— »
Զանազան ծախքեր, երեկոյթի և այլն և այլն	57 »	80 »
Գումար	247 »	80 »
Ընդհանուր ծախք	605 »	90 »

1—1

Տասը տարի է Դավրէժից Ռուսաստան է անցել եղբայրս Գէորգ Հայրապետեան Սարվարեան, միջահասակ չեչոտ դէմքով այժմ 30 տարեկան ինքն էլ դավրիժեցի. այսքան տարում ոչ մի լուր չունինք։ Կը խնդրեմ Ռուսաստանի Կովկասի և առհասարակ ամեն տեղի հայ եղբայրներից որոնք գիտեն նրա տեղը (եթէ մեռած էլ լինի) թող չը զլանան յայտնել Շաւիղի խմբագրութեան որով շնորհակալութեանս կարժանանան.

Գասպար Սարվարեանց

Փորի ճճուի դարման

Որովհետև փոստային ծախսը աւելացրած է փոստային վարչութեան կողմից, ուստի յայտարարում եմ որ այդ դեղը այսուհետև կարժենայ Ռուսաստանի համար 3 ռուբլի։ Ռուսաստանից կարող են դիմել՝ M. Hordanan Eliazarian Téhéran.

1—3

GRAND HOTEL
ԳՐԱՆԴ ՕՏԷԼ
Հիւրանոց
ԱԼԱ-ԷԴ-ԴՕՎԼԷՅԻ ՓՈՂՈՑՈՒՄ
ԹԷՀՐԱՆ
12—50